ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳՀԾՁԲ-7/11-1

ք. Երևան 30.05.2019թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Սոնթորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Պատվիրատու», մի կողմից, և Պոժմաստեր ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Լ. Սարգսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Կատարող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման գործընթացությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ դրանց միջամտելով Կատարողի գործունեությանը,

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն,

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը,

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժ և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

[illegible] Ներառյալ՝ և նշված կազմակերպությունը պատասխանատու ստորաբաժանումը այդ [illegible] [illegible] ծառայությունն վերջնարդյունք-հաշվարկի մեջ օրինակ՝ ծանոթագրված, [illegible] գրանցված գոյություն ունեցող գրքամատի Իրականացման /կամ իրականացման [illegible] [illegible] /կամ անձնական կոչից և վերացված գրքամատի կնիքով, առանձին-առանձին նշելով յուրաքանչյուր [illegible] [illegible] /գրքի-տրված/ մասի անվանումը և կատարած ծառայությունների հաշվարկը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Այն դեպքում երբ Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման ձևերը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **հինգ** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով տեղեկացնում է Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար դրվել հանդիսացած բացառական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 1250000 (չորս միլիոն երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը բացվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է հոկտեմբերի 1-ից հետո 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 10-ը:

4.3 Կատարողին վճարվող գումարը որոշվում է հետևյալ բանաձևով՝

Կ.Վ.Գ. = Տ.Ն.Գ. x Ա.Գ. / Ն.Գ. x Կ.Ծ., որից՝

Կ.Վ.Գ. - կատարողին վճարվող գումար.

Տ.Ն.Գ. - առանձին տողի միավորի նախահաշվային գինը.

Ա Գ. - 9700.

Ն Գ. - 17100

Կ Ծ. - մատուցված ծառայության ծավալը

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների չակատարման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 հոդվածում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի պայմաններ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման ընթացակարգում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի ավելացման փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի

[illegible] ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության [illegible]ման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) [illegible]ները (իրավունքներ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի [illegible]ման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, [illegible] են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն [illegible]ելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված [illegible]ությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները [illegible]ող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման [illegible]ով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար [illegible]ի անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ [illegible]ությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ [illegible]ությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ [illegible]ված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների [illegible]ումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու [illegible]ով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը [illegible]ատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: [illegible]ողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ [illegible]ումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: [illegible]ություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 9 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր [illegible]տաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են [illegible]ագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն [illegible]ում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում [illegible] Ի թիկունքի վարչությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	<<Պոժմաստեր>> ՍՊԸ
ք. Երևան, Բագրևանդի 5	ք. Երևան, Մանթաշյան 12 շ., 24
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	<<ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 16045049610600
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 02265669
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Տնօրեն Կ. Մանուկյան

Հավելված N 1
N ԳՀԾՁԲ-7/11-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇԸ
1	2
ԿՐԱԿՄԱՐԻՉՆԵՐԻ ՎԵՐԱԼԻՑՔԱՎՈՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ	ԿՓ-2 տեսակի կրակմարիչների վերալիցքավորում և նորոգում (հատուկ մասերի փոխարինում): Դատարկվում է կրակմարիչի միջի փոշին: 2,4 ՄՊա ճնշմամբ սահմանված կարգով ստուգվում է կրակմարիչի իրանի պիտանելիությունը, անհրաժեշտության դեպքում կատարվում է հատուկ մասերի՝ փական, մանոմետր, փողակի փոխարինում, որից հետո լիցքավորում կրակմարման նոր փոշիով: Վերալիցքավորված կրակմարիչի տեխնիկական պայմանները պետք է համապատասխանեն գործարանային թողարկման պայմաններին՝ լիցքի քաշը՝ 2±0.1կգ, լիցքավորված կրակմարիչի կշիռը՝ 3±0.4 կգ, աշխատանքային ճնշումը կրակմարիչի իրանի մեջ՝ 1.2-1.6 ՄՊա: Պիտակավորվում է, լրացվում և կրակմարիչին ամրացվում է լիցքավորման ամիսն, տարեթիվը և վերանորոգման ու լիցքավորման երաշխիքը (1 տարի) այնուհետև կապարակնքվում: Կրակմարման փոշին հատկացվում է գնորդի կողմից:
	ԿՓ-5 տեսակի կրակմարիչների վերալիցքավորում և նորոգում (հատուկ մասերի փոխարինում): Դատարկվում է կրակմարիչի միջի փոշին: 2,4 ՄՊա ճնշմամբ սահմանված կարգով ստուգվում է կրակմարիչի իրանի պիտանելիությունը, անհրաժեշտության դեպքում կատարվում է հատուկ մասերի՝ փականի և մանոմետրի փոխարինում, փողրակի փոխարինում կամ վերանորոգում, որից հետո լիցքավորում կրակմարման նոր փոշիով: Վերալիցքավորված կրակմարիչի տեխնիկական պայմանները պետք է համապատասխանեն գործարանային թողարկման պայմաններին՝ լիցքի քաշը՝ 5±0.25կգ, աշխատանքային ճնշումը կրակմարիչի իրանի մեջ՝ 1.2-1.6 ՄՊա: Պիտակավորվում է, լրացվում և կրակմարիչին ամրացվում է լիցքավորման ամիսն, տարեթիվը և վերանորոգման ու լիցքավորման երաշխիքը (1 տարի) այնուհետև կապարակնքվում: Կրակմարման փոշին հատկացվում է գնորդի կողմից:
	ԿՓ-8 տեսակի կրակմարիչների վերալիցքավորում և նորոգում (հատուկ մասերի փոխարինում): Դատարկվում է կրակմարիչի միջի փոշին: 2,4 ՄՊա ճնշմամբ սահմանված կարգով ստուգվում է կրակմարիչի իրանի պիտանելիությունը, անհրաժեշտության դեպքում կատարվում է հատուկ մասերի՝ փականի և մանոմետրի փոխարինում, փողրակի փոխարինում կամ վերանորոգում, որից հետո լիցքավորում կրակմարման նոր փոշիով: Վերալիցքավորված կրակմարիչի տեխնիկական պայմանները պետք է համապատասխանեն գործարանային թողարկման պայմաններին՝ լիցքի քաշը՝ 8±0.25կգ, աշխատանքային ճնշումը կրակմարիչի իրանի մեջ՝ 1.2-1.6 ՄՊա: Պիտակավորվում է, լրացվում և կրակմարիչին ամրացվում է լիցքավորման ամիսն, տարեթիվը և վերանորոգման ու լիցքավորման երաշխիքը (1 տարի) այնուհետև կապարակնքվում:
	ԱԿ-2 տեսակի կրակմարիչների վերալիցքավորում և նորոգում (հատուկ մասերի փոխարինում): Դատարկվում է կրակմարիչի միջի պարունակությունը: 22,5 ՄՊա ճնշմամբ սահմանված կարգով ստուգվում է կրակմարիչի իրանի պիտանելությունը, կատարվում է կրակմարիչների հատուկ մասերի՝ փական, փողակի փոխարինում, որից հետո լիցքավորում ածխաթթվային գազով: Վերալիցքավորված կրակմարիչի տեխնիկական պայմանները պետք է համապատասխանեն գործարանային թողարկման պայմաններին՝ լիցքի քաշը՝ 2±0,1կգ, աշխատանքային ճնշումը կրակմարիչի իրանի մեջ՝ 5,8±01 ՄՊա: Պիտակավորվում է՝ լրացվում և կրակմարիչին ամրացվում է լիցքավորման ամիսն, տարեթիվը և վերանորոգման ու

ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇԸ
	լիցքավորման երաշխիքը (1 տարի) այնուհետև կապարակնքվում:

Նշում՝ 1. Վերալիցքավորման, նորոգման (հատուկ մասերով փոխարինելու) ծառայությունը իրականացվում է ծառայությունը մատուցող կազմակերպությունում: Կրակմարիչների լիցքավորման վայր և հակառակ ուղղությամբ տեղափոխումը կազմակերպվում և իրականացվում է զորամասի կողմից:

2. Նշված ծառայությունների համար անհրաժեշտ է հավաստագիր, որ վերալիցքավորված և նորոգված կրակմարիչները պիտանի են միանգամյա օգտագործման: Հավաստագիրը ներկայացնում է ծառայությունը մատուցող կազմակերպությունը:

3. Տեղադրվող պահեստամասերը պետք է լինեն նոր և չօգտագործված: Մեկ տարվա ընթացքում, կազմակերպությունը պատասխանատու է կատարված ծառայության որակի համար: Նշված ժամանակահատվածում վերանորոգված կրակմարիչների անսարքությունների ի հայտ գալու դեպքում, ծառայությունը մատուցող կազմակերպությունը պարտավոր է իր միջոցների հաշվին վերացնել անսարքությունները:

4. ԿՓ-2 և ԿՓ-5 տեսակի կրակմարիչների վերալիցքավորման Վեկտոն ԱԲՍ-25 տեսակի կրակմարման փոշին հատկացվում է գնորդի կողմից, ք. Երևան Արցախի 61 հասցեից, առքերումը իրականացվում է ծառայությունը մատուցող կազմակերպության ուժերով:

5. Կրակմարիչների հետագա շահագործման պիտանելիության, հատուկ մասերով փոխարինելու և/կամ նորոգելու անհրաժեշտությունը (աշխատորոշումը) որոշում է վերալիցքավորման ծառայությունը մատուցող կազմակերպության մասնագետը՝ ավելի կրակմարիչը ներկայացրած զորամասի ներկայացուցչի ներկայությամբ:

6. Կրակմարիչների հատուկ մասերի փոխարինումից հետո, փոխարինված (վնասված) մասերը հանձնվում է այն զորամասի ներկայացուցչին, որտեղից որ ներկայացվել է կրակմարիչը:

7. Ծառայություն մատուցող կազմակերպության մասնագետի կողմից կատարված զննման արդյունքում խոտանված կրակմարիչները տարբերակվում են (կրակմարիչի իրանը ծակելու միջոցով)՝ հետագա շահագործումից հանելու նպատակով:

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Գնման ենթակա ապրանքները	Չափի միավոր	Քանակը	Ընդհանուր առավելագույն գումար/ՀՀ դրամ	Ծառայության մատուցումը 2019թ. 3-րդ և 4-րդ եռամսյակների ընթացքում, ըստ ՀՈՒ ԹՎ հակահրդեհային տեսչության հայտերի ոչ ոք քան 30.11.2019թ.
կրակմարիչների վերալիցքավորման ծառայություններ	դրամ	1	4.950.000	

	ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	Չ/մ	Միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր առավելա-գույն գումարը /ՀՀ դրամ/
	Կրակմարիչների վերալիցքավորման ծառայություններ	**դրամ**		**4.950.000**
1.1 ԿՓ-2 տեսակի կրակմարիչների վերալիցքավորում և նորոգում (հատուկ մասերի փոխարինում)				
	Մանոմետր՝ փոխարինում նորով	հատ	500	
	Փողակ՝ փոխարինում նորով	հատ	400	

	Փական՝ փոխարինում նորով	հատ	500	
	Լիցքավորման աշխատանք (նաև ազոտով լիցքավորումը)	հատ	500	
1.2 ԿՓ-5 տեսակի կրակմարիչների վերալիցքավորում և նորոգում (հատուկ մասերի փոխարինում)				
	Մանոմետր՝ փոխարինում նորով	հատ	500	
	Փողրակ՝ փոխարինում նորով	հատ	1700	
	Փողրակ՝ վերանորոգում	հատ	200	
	Փական՝ փոխարինում նորով	հատ	500	
	Լիցքավորման աշխատանք (նաև ազոտով լիցքավորումը)	հատ	600	
1.3 ԿՓ-8 տեսակի կրակմարիչների վերալիցքավորում և նորոգում (հատուկ մասերի փոխարինում)				
	Մանոմետր՝ փոխարինում նորով	հատ	500	
	Փողրակ՝ փոխարինում նորով	հատ	1700	
	Փողրակ՝ վերանորոգում	հատ	200	
	Փական՝ փոխարինում նորով	հատ	500	
	Լիցքավորման աշխատանք (նաև կրակմարման փոշիով և ազոտով լիցքավորումը)	հատ	3800	
1.4 ԻԿ-2 տեսակի կրակմարիչների վերալիցքավորում և նորոգում (հատուկ մասերի փոխարինում)				
	Փողակ՝ փոխարինում նորով	հատ	3000	
	Փական՝ փոխարինում նորով	հատ	500	
	Լիցքավորման աշխատանք (նաև ածխաթթու գազով լիցքավորումը)	հատ	1500	

Նշում՝ ԿՓ-2 և ԿՓ-5 տեսակի կրակմարիչների վերալիցքավորման Վեկսոն ԱԲՍ-25 տեսակի փոշին տրամադրվում է գնորդի կողմից՝ ծառայությունը մատուցող կազմակերպությանը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

<<Պոժմաստեր>> ՍՊԸ
ք. Երևան, Մ[illegible] 12 ն., 24
<<ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 16045049610000
02265669
«ՊՈԺՄԱՍՏԵՐ»
"POZHMASTER"
"ПОЖМАСТЕР"

Տնօրեն՝ [illegible]

Հավելված N 2

N ԳՀԾՁԲ-7/11-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Գնման ենթակա ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2019թ. պետական բյուջեից ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2019թ. ընդ որում		
	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
կրակմարիչների վերալիցքավորման ծառայություններ	4950000	4950000	4950000

Նշում՝ CPV կոդը՝ 50611200/1:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

<<Պոժմաստեր>> ՍՊԸ
ք. Երևան, Մանթաշյան 12 շ., 24
<<ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 16045049610600
ՀՎՀՀ 02265669

Տնօրեն՝ Լ.Սարգսյան

Հավելված N 3
N ԳՀԾՁԲ-7/11-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

» « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » . » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Մատուցված ծառայությունների					
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրամական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԾՁԲ-7/11-1 պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____ -ի
Պատվիրատուի անվանումը Կատարողի անվանումը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի ելնելով ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն